ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 284

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքը (Բենիամին բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Ախուրյան համայնքի Բենիամին բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքը (Բենիամին բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակի-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
08-027-0001-0015 կադաստրային ծածկագրով 0.046287 հա մակերեսով և 08-027-0001-0016 կադաստրային ծածկագրով 0.10381 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրեր	08-027-0001-0015 կադաստրային ծածկագրով 0.046287 հա մակերեսով և 08-027-0001-0016 կադաստրային ծածկագրով 0.10381 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

2. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պայմանը (կցվում է),

3. Ախուրյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Բենիամին բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի (Բենիամին բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, «29» «օգոստոսի» 2025 թ.